ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱԼԵՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղալեչյան.

Ի պատասխան Ձեր 11.11.2019թ. հ.01/421 գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ առողջապահության նախարարության 07.10.2019թ. հ.ԱՍ/05/16468-19 գրությամբ տեղեկացվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող առողջապահական ընկերություններին, որ բացառապես անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 952-Ն որոշման դրույթներով:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնարարվել է առողջապահական ընկերությունների տնօրեններին կնքել համապատասխան պայմանագրեր այն բուժհաստատությունների հետ, որոնք կարող են իրականացնել ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 4-ի թիվ 952-Ն որոշման պահանջները և համալրված են տվյալ ծառայությունը մատուցող համապատասխան նեղ մասնագետներով՝ մանուկներին սպասարկելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ